

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

*Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի խորհրդի 31.01.2011 թ.
թիվ 11 Ա որոշմամբ*

**Դրամավարկային
քաղաքականության
ծրագիր**

2011 թ. I եռամսյակ

Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն

2010 թվականի չորրորդ եռամսյակի փաստացի ցուցանիշները և զարգացումները	3
Հաջորդող 12-ամսյա ժամանակահատվածի կանխատեսումները	11
<i>Արտաքին միջավայր</i>	11
<i>Համախառն առաջարկ</i>	13
<i>Աշխատանքի շուկա</i>	16
<i>Համախառն պահանջարկ</i>	16
<i>Համախմբված բյուջե</i>	18
Գնաճի կանխատեսումները և դրամավարկային քաղաքականության ուղղությունները կանխատեսվող 12-ամսյա ժամանակահատվածում	19

2010 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՓԱՍՏԱՑԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

2010 թ. սկզբին ՀՀ ֆինանսատնտեսական իրավիճակը բնութագրվում էր բարձր գնաճային միջավայրով, քանի որ **2009 թվականին իրականացված ընդլայնողական հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների ազդեցությունը** սկսեց ի հայտ գալ 2009 թվականի վերջին, և ակնկալվում էր, որ 2010 թվականի առաջին եռամսյակում կհասնի իր գագաթնակետին: Գնաճային միջավայրի ձևավորմանը նպաստող երկրորդ գործոնը 2009 թվականի երկրորդ կեսից **համաշխարհային տնտեսության վերականգնման պայմաններում պարենային և հիմնական հումքային ապրանքների միջազգային գների աճն էր**, որի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա ակնկալվում էր առավելապես 2010 թվականի առաջին եռամսյակում: Գնաճային միջավայր ձևավորող երրորդ գործոնը 2010 թվականի **ապրիլի 1-ից գազի և ջրի սակագների բարձրացումն էր**, որի ազդեցությունը գնաճի վրա արտահայտվեց ինչպես ուղղակիորեն՝ այդ ծառայությունների սակագների աճի միջոցով, այնպես էլ անուղղակիորեն՝ ինքնարժեքի միջոցով այլ ապրանքների գների աճով: Նման իրավիճակում Կենտրոնական բանկը 2010 թվականի հունվարից իրականացրել է կոշտ դրամավարկային քաղաքականություն՝ առաջին հինգ ամիսներին շարունակ բարձրացնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը (ընդհանուր առմամբ՝ 2.5 տոկոսային կետով)՝ զուգահեռաբար իրականացնելով ապադոլարայնացմանն ուղղված միջոցառումներ:

Իրականացված քաղաքականության արդյունքում 12-ամսյա գնաճը փետրվարին արձանագրված 9.4%-ից շարունակաբար նվազելով՝ հունիսին մոտեցավ նպատակային միջակայքի վերին սահմանին՝ կազմելով 5.8%: Սակայն հունիսից իրավիճակը կտրուկ փոխվեց, և գնաճային միջավայրը կտրուկ ընդլայնվեց: Այդուհանդերձ, բնականոն գնաճը՝ շարունակում էր նվազել՝ արտացոլելով տարեսկզբին իրականացված դրամավարկային պայմանների խստացումը:


Առաջին գործոնը, որը նոր գնաճային ազդակներ հաղորդեց ՀՀ տնտեսությանը, **ցորենի միջազգային գնի կտրուկ աճն էր, որին հաջորդեց այլ պարենային ապրանքների միջազգային գների աճը:** Հաջորդ էական գործոնը **գյուղատնտեսության ճյուղի խորը անկումն էր**, որն արտահայտվեց գյուղատնտեսական մթերքների առաջարկի կտրուկ նվազմամբ: Ակնհայտ էր, որ գնաճային միջավայրը ձևավորվում է բացառապես առաջարկի գործոններով պայմանավորված, որոնք ենթակա չեն դրամավարկային կարգավորման: Այս իրավիճակում, չնայած գնաճի արագացմանը, Կենտրոնական բանկը ձեռնպահ է մնացել վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացումից, քանի որ բոլոր գնահատումները ցույց էին տալիս, որ ներքին պահանջարկի դանդաղ տեմպերով վերականգնումը գնաճային ճնշումներ չի ստեղծում: Այսինքն՝ բարձր գնաճը պայմանավորված չէր դրամավարկային քաղաքականության ներգործությանը ենթակա պահանջարկի գործոններով: Այս իրավիճակում ԿԲ-ն 2010 թվականի հունիսից անփոփոխ է թողել հիմնական գործիքի տոկոսադրույքը:

Նման պայմաններում 2010 թվականի ընթացքում արձանագրվեց 9.4% գնաճ, որի միայն 7.5 տոկոսային կետը պարենային ապրանքների գների աճի հաշվին էր. ներքին գյուղատնտեսական ապրանքների գների աճի հաշվին արձանագրվել է շուրջ 5 տոկոսային կետ գնաճ, ավելի քան 2 տոկոսային կետ՝ ներմուծվող պարենային ապ-

¹ 77 ԿԲ կողմից մշակված՝ բնականոն գնաճի հաշվարկման մեթոդաբանությունը մանրամասն ներկայացված է «77 ԿԲ բանբեր» պարբերականում (2008 թ. 1-ին եռամսյակ). նույն պարբերականում հրապարակվում են բնականոն գնաճի ցուցանիշները:

րանքների գների աճի հաշվին: Ընդ որում, չորրորդ եռամսյակում ավելացել է պարենային ապրանքների նպաստումն ընդհանուր գնաճին: Եռամսյակի ընթացքում արձանագրվել է 4.5% գնաճ՝ պարենային ապրանքների գները եռամսյակի ընթացքում բարձրացել են 8.1%-ով (նպաստումն ընդհանուր գնաճին՝ 4.4 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների գները՝ 1.5%-ով (նպաստումը՝ 0.2 տոկոսային կետ), իսկ ծառայությունների սակագները նվազել են 0.2%-ով (նպաստումը՝ 0.05 տոկոսային կետ): 2010 թվականի հունվար-դեկտեմբերին արձանագրված միջին գնաճը նախորդ տարվա միջինի նկատմամբ կազմել է 8.2%:

Նոյեմբեր-դեկտեմբերին նկատվել է առաջարկի շուկերով պայմանավորված և ամիսներ շարունակ դրսևորված գնաճի երկրորդային ազդեցությունների ուժգնացում, ձևավորվել են գնաճային սպասումներ, որոնք արտացոլվել են նաև բնականոն գնաճի ցուցանիշում: Եռամսյակի ընթացքում արձանագրվել է 3.0% բնականոն գնաճ, որի պարագայում 12-ամսյա բնականոն գնաճը տարեվերջին կազմել է 6.26%:



Արտաքին միջավայր

Համաձայն ԱՄՀ ճշգրտված գնահատումների՝ 2010 թ. համաշխարհային տնտեսական աճը (գնողունակության համարժեքությամբ հաշվարկված) կկազմի 5.0%՝ նախորդ տարի գրանցված շուրջ 0.6% անկման փոխարեն²: Ինչ վերաբերում է գնաճին, ապա 2010թ. ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում վերջինս արագացել է, ինչն առավելապես դրսևորվել է չորրորդ եռամսյակի ընթացքում: 2010 թ. գնահատումների համաձայն՝ զարգացած երկրների գնաճը կազմել է 1.5%, զարգացող երկրներինը՝ 6.5% (նախորդ տարի գնաճը համապատասխանաբար կազմել էր 0.1% և 5.2%): Ընդ որում, ԱՊՀ երկրների գնաճը 2010 թ. միջին հաշվով կազմել է 10.0%³ (տե՛ս հավելվածը):

2010 թ. չորրորդ եռամսյակում հիմնական ապրանքների միջազգային շուկաներն աչքի են ընկել գների էական տատանումներով՝ պայմանավորված Չինաստանում արձա-

² IMF, "World Economic Outlook: Update", January 25, 2011.

³ Ներկայացված է առանց Թուրքմենստանի և Ուզբեկստանի, որոնց տվյալները դեռևս հասու չեն: Ցուցանիշը հաշվարկվել է միջին թվաբանական մեթոդով:

նագրված գնաճի պայմաններում հնարավոր կրճատողական քաղաքականությունների իրականացման սպասումներով, ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգի կողմից Ծավալային ընդլայնման երկրորդ փուլի մեկնարկով և Եվրոգոտում պարտքային հիմնախնդիրների սրմամբ: Չնայած ապրանքային շուկաների որոշակի տատանողական վարքագծին, դրանցում հիմնականում պահպանվեցին էական գնաճային ճնշումները. մասնավորապես՝ եռամսյակի վերջում արձանագրվեցին գրեթե բոլոր հիմնական հումքային ապրանքների միջազգային գների՝ վերջին երկու տարիների առավելագույն արժեքները:

2010 թ. չորրորդ եռամսյակում գրանցվեց նավթի միջազգային գների՝ եռ/եռ 13.6 տոկոս աճ և Լոնդոնում գնանշվող «Բրենթ» տեսակի հում նավթի մեկ բարելի միջին եռամսյակային գինը կազմեց 86.8 ԱՄՆ դոլար (տ/տ աճը՝ 15.8%): Հարկ է նշել, որ եռամսյակի վերջում նավթի մեկ բարելի միջազգային գինը տարվա ընթացքում երրորդ անգամ գերազանցեց 90 ԱՄՆ դոլարի սահմանագիծը՝ ձևավորվելով վերջին 26 ամիսների առավելագույն մակարդակում՝ պայմանավորված ցուրտ ձմռան հետևանքով համաշխարհային պահանջարկի կտրուկ աճով, ինչպես նաև ԱՄՆ հում նավթի պաշարների կրճատմամբ:

Չորրորդ եռամսյակում գների աճ է գրանցվել ինչպես արդյունաբերական, այնպես էլ թանկարժեք մետաղների շուկաներում: Լոնդոնի մետաղների բորսայում գնանշվող պղնձի գինը, չորրորդ եռամսյակում աճելով եռ/եռ 18.4 տոկոսով, կազմել է միջինը շուրջ 8617 ԱՄՆ դոլար՝ տոննայի դիմաց (տ/տ աճը՝ 29.5%): Հարկ է նշել նաև, որ պայմանավորված համաշխարհային պահանջարկի՝ առաջարկը գերազանցելու հանգամանքով, շուկայում ձևավորված լարվածությունը եռամսյակի վերջին հանգեցրել է նույնիսկ պղնձի գնի՝ 9000 ԱՄՆ դոլարի սահմանագիծը գերազանցող մակարդակի ձևավորմանը: Մոլիբդենի միջազգային գները միջինում գրանցել են եռ/եռ շուրջ 3.1% աճ՝ շուրջ 42.6%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի միջին ցուցանիշը: Ոսկու միջազգային գներն այս եռամսյակում ևս արձանագրել են շարունակական աճ. ոսկու միջին եռամսյակային գինը նախորդ եռամսյակի համեմատությամբ աճել է 11.6%-ով՝ կազմելով 1370 ԱՄՆ դոլար՝ 1 տրոյական ունցիայի դիմաց (տ/տ աճը կազմել է 24.3%):

Հացահատիկի միջազգային գները ևս չորրորդ եռամսյակում շարունակել են վերելքը՝ եռամսյակի ընթացքում արձանագրելով նոր բարձրակետեր: Արդյունքում Չիկագոյի ապրանքահումքային բորսայում հացահատիկի եռամսյակային միջին գինը կազմել է 7.7 ԱՄՆ դոլար՝ մեկ բուշելի դիմաց, ինչը նախորդ եռամսյակի միջին ցուցանիշը գերազանցում է 18.5%-ով, իսկ նախորդ տարվա նույն եռամսյակի ցուցանիշը՝ 38.2%-ով: Շուկայի պահպանվող լարվածության պայմաններում եռամսյակի վերջում հացահատիկի միջազգային գները գերազանցել են մեկ բուշելի դիմաց 8.5 ԱՄՆ դոլարի սահմանը: Բրնձի միջազգային գները չորրորդ եռամսյակում եռ/եռ ավելացել են 26.6%-ով՝ կազմելով 14.1 ԱՄՆ դոլար՝ մեկ ամերիկյան ցենտների (45.3 կգ) համար, ինչը նախորդ տարվա ցուցանիշից ցածր է շուրջ 4.9%-ով՝ հիմնականում պայմանավորված 2009 թ. վերջին գրանցված կտրուկ գնաճով:

Համաձայն Նյու Յորքի Առևտրի խորհրդի հրապարակած շաքարավազի միջազգային գների ինդեքսի՝ 2010 թ. չորրորդ եռամսյակում գրանցվել է շաքարավազի գների եռ/եռ 34.2% աճ, ինչի արդյունքում շաքարավազի միջին եռամսյակային գինը կազմել է 35.6 ԱՄՆ ցենտ՝ ֆունտի դիմաց (տ/տ աճը՝ 50.4%): Շաքարավազի միջազգային շուկայում պահպանվող գնաճային միջավայրը պայմանավորված է աննախադեպ պահանջարկով, որը դժվարությամբ է բավարարվում առկա արտադրության ծավալներով:

Չորրորդ եռամսյակում Եվրոգոտում կրկին սրվեցին պարտքային հիմնախնդիրները, ու թեև խնդիրների հետագա տարածումը կանխելու նպատակով ԵՄ մյուս երկրները

ԱՄՀ հետ համատեղ հանդես եկան Իռլանդիային աջակցության փաթեթ տրամադրելու նախաձեռնությամբ, այնուամենայնիվ Եվրոգոտու մյուս խոցելի երկրներում հնարավոր հիմնախնդիրների տարածման և սրման մտավախությունների ներքո Եվրոյի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ եռամսյակի վերջում զգալիորեն արժեզրկվեց: Արդյունքում՝ հոկտեմբեր-նոյեմբերին ձևավորված Եվրոյի փոխարժեքի բարձր մակարդակի պայմաններում վերջինս եռ/եռ արժևորվեց 5.2%-ով՝ կազմելով 1.36 ԱՄՆ դոլար՝ 1 Եվրոյի դիմաց (տ/տ Եվրոյի արժեզրկումը կազմում է 8.0%):

2010 թ. չորրորդ քառորդում ևս ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգը և Եվրոպական կենտրոնական բանկը պահպանել են դրամավարկային քաղաքականության ցածր տոկոսադրույքները: Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ԱՄՆ տնտեսության և զբաղվածության վերականգնման դանդաղ տեմպերը և տնտեսական զարգացման հեռանկարների վերաբերյալ մտավախությունները, ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգը նոյեմբերին հայտարարել է Ծավալային ընդլայնման քաղաքականության նոր մեկնարկի մասին (600 մլրդ ԱՄՆ դոլար ծավալով): Վերջինիս հետևանքով եռամսյա LIBOR միջբանկային տոկոսադրույքը եռամսյակի ընթացքում միջինում նվազել է՝ կազմելով 0.29%:

Արդյունքում՝ մի կողմից Չինաստանի, Հնդկաստանի և զարգացող մի շարք երկրների պահանջարկը, մյուս կողմից՝ զարգացած երկրների ընդլայնողական քաղաքականությունները նպաստեցին 2010 թ. վերջին միջազգային ապրանքային շուկաներում գնաճային ճնշումների ուժգնացմանը, ինչն աստիճանաբար փոխանցվում է ներքին ապրանքային շուկաներ:

Համախառն առաջարկ⁴

Ինչպես և ակնկալվում էր⁵, հունվար-դեկտեմբերին արձանագրված տնտեսական աճը կազմել է տ/տ 2.6%:

Արդյունաբերության ճյուղում արձանագրվել է ավելացված արժեքի 9.5% աճ՝ հիմնականում պայմանավորված մետաղական հանքաքարերի արդյունահանման (24.7%), սննդամթերքի (9.7%), խմիչքների (31.6%), շինանյութերի (12%), մետալուրգիայի (6.4%) և ոսկերչական արտադրատեսակների արտադրության ծավալների (15.1%) աճով, ինչը ինչպես ներքին, այնպես էլ համաշխարհային տնտեսության վերականգնման պայմաններում արտաքին պահանջարկի աճի արդյունք է:

Ինչ վերաբերում է էլեկտրաէներգիայի և գազի արտադրության ծավալներին, ապա այս ենթաճյուղում արձանագրվել է շուրջ 10.3% անկում, թեև էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները բնեղեն արտահայտությամբ ավելացել են տ/տ շուրջ 14.5%-ով, որի արդյունքում արձանագրվել է էլեկտրաէներգիայի արտահանման ծավալների զգալի աճ:

Շինարարության ճյուղում արձանագրվել է ավելացված արժեքի 3.7% աճ: Ընդ որում, համայնքների միջոցների (4 անգամ աճ), մարդասիրական օգնության (3.4 անգամ աճ) և կազմակերպությունների միջոցների (35.3% աճ) հաշվին իրականացվող շինարարության ծավալների աճն ուղեկցվել է միջազգային վարկերի (43.1% նվազում), բնակչության միջոցների (38.5% նվազում) և *պետական բյուջեի* (1.7% նվազում) հաշվին իրականացվող շինարարության ծավալների կրճատմամբ:

Ըստ շինարարության ճյուղային բաշխվածության՝ ճյուղում արձանագրված աճին մեծապես նպաստել է *գյուղատնտեսության, մշակող արդյունաբերության*, տրանսպոր-

⁴ *Տնտեսության ճյուղերի և ենթաճյուղերի ցուցանիշները ներկայացնում են ընթացիկ տարվա հունվար-դեկտեմբերը նախորդ տարվա հունվար- դեկտեմբերի նկատմամբ:*

⁵ *Տե՛ս «Դրամավարկային քաղաքականության ծրագիր. 2010 թ. IV եռամսյակ»:*

տի, ջրամատակարարման, պետական կառավարման և պաշտպանության ոլորտներում իրականացված շինարարության ծավալների աճը:

Ծառայությունների ոլորտում ավելացված արժեքը ավելացել է 4.6%-ով, ինչը հիմնականում արդյունք է մեծածախ և մանրածախ առևտրի ծավալների համապատասխանաբար 12% և 0.6% աճի: Միևնույն ժամանակ, մատուցված ծառայությունների ծավալն ավելացել է 3.8%-ով, ընդ որում, արձանագրվել է բոլոր ոլորտներում մատուցված ծառայությունների ծավալների աճ, որտեղ առավել մեծ նպաստում ունեցել են ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտում գրանցված 3% աճը, տրանսպորտի՝ 1.7% և տեղեկատվության ու կապի 1.1% աճը:

Գյուղատնտեսության ճյուղում ավելացված արժեքի անկումը կազմել է տ/տ 13.4%, որը գրեթե ամբողջությամբ պայմանավորված է բուսաբուծության ենթաճյուղում արձանագրված 20.3% նվազմամբ: Ընդ որում, բուսաբուծության արտադրության ծավալների նվազումը հիմնականում ցանքատարածությունների կրճատման և անբարենպաստ եղանակային պայմանների պատճառով բերքի վնասման հետևանք է:

Աշխատանքի շուկա⁶

Ըստ ՀՀ ԿԲ գնահատումների՝ 2010 թվականի չորրորդ եռամսյակում միջին անվանական աշխատավարձի աճը կազմել է 7.2%, որի պարագայում 2010 թվականի միջին անվանական աշխատավարձի աճը կազմել է 6.8%: Չորրորդ եռամսյակում արձանագրված անվանական աշխատավարձի աճը պայմանավորվել է տնտեսական ակտիվության վերականգնման արդյունքում մասնավոր հատվածում և բյուջետային ֆինանսավորում ունեցող որոշ կազմակերպություններում աշխատավարձերի աճով: Չորրորդ եռամսյակում միջին անվանական աշխատավարձը մասնավոր հատվածում ավելացել է հիմնականում ի հաշիվ արդյունաբերության և ծառայության ճյուղերի աշխատավարձերի աճի:

Տնտեսության վերականգնման պայմաններում շարունակել է ավելանալ աշխատուժի նկատմամբ պահանջարկը, և պաշտոնապես գրանցված գործազրկության միջին մակարդակը չորրորդ եռամսյակում նվազել է 0.2 տոկոսային կետով՝ կազմելով 6.8%, իսկ տարվա արդյունքում՝ 7.0%: Չորրորդ եռամսյակում արձանագրված տնտեսական աճի պայմաններում ավելացել է նաև արտադրողականությունը՝ կազմելով շուրջ 2%:

Նշված զարգացումների արդյունքում միավոր աշխատուժի ծախսերը ավելացել են շուրջ 5%-ով՝ տնտեսությունում առաջացնելով թույլ գնաճային ճնշումներ, որոնք, ըստ գնահատումների, կազմել են 0.3 տոկոսային կետ:

Համախառն պահանջարկ⁷

Ըստ ՀՀ ԿԲ գնահատումների՝ 2010 թվականի չորրորդ եռամսյակում մասնավոր ծախսումներն իրական արտահայտությամբ ավելացել են շուրջ 2%-ով: Նշենք, որ

⁶ Աշխատանքի շուկայի 2010 թվականի տվյալները ՀՀ ԿԲ գնահատումներն են՝ հիմնված 2010 թ. երրորդ եռամսյակի և 2010 թ. հոկտեմբեր, նոյեմբեր ամիսների՝ ԱՎԾ կողմից հրատարակված փաստացի ցուցանիշների վրա: Ենթաբաժնում ներկայացված աճի ցուցանիշները նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ են, եթե այլ բան նշված չէ:

⁷ Մասնավոր սպառման և ներդրումների իրական աճի 2010 թվականի ցուցանիշները ՀՀ ԿԲ գնահատումներն են: Նշված ցուցանիշների փաստացի թվերը ՀՀ ԱՎԾ կողմից հրատարակված՝ 2010 թվականի երրորդ եռամսյակի տվյալներն են: Ենթաբաժնում ներկայացված իրական աճի գնահատված ցուցանիշները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ են, եթե այլ բան նշված չէ:

տնտեսական աճի տեմպերի դանդաղման պայմաններում թուլացել են մասնավոր ծախսումների աճի տեմպերը: Մասնավոր հատվածի ծախսումների աճը չեզոքացվել է պետական ծախսումների նվազմամբ, որի արդյունքում ներքին պահանջարկը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ էականորեն չի փոխվել: Այդ զարգացումների արդյունքում մասնավոր ծախսումների 2010 թվականի տարեկան աճը կազմել է 3.7%, որն էլ պետական ծախսումների 2.7% նվազման պայմաններում հանգեցրել է ներքին պահանջարկի մոտ 3% աճի⁸:

Չորրորդ եռամսյակում մասնավոր ծախսումների կառուցվածքում մասնավոր սպառումն իրական արտահայտությամբ ավելացել է մոտ 3%-ով՝ պայմանավորված մասնավոր հատվածի իրական եկամուտների փոքր աճով և սպառողների վստահության վերականգնմամբ:

Տնտեսությանը տրամադրվող վարկերի ծավալների և կազմակերպությունների սեփական միջոցների աճով պայմանավորված՝ ավելացել են կազմակերպությունների կողմից մեքենասարքավորումների ձեռքբերումը և շինարարության իրականացումը: Սակայն չորրորդ եռամսյակում, ընդհանուր շինարարության ճյուղի դանդաղ վերականգնման⁹ պարագայում, նախորդ տարվա համեմատ տնտեսությունում էականորեն չեն փոխվել մասնավոր հատվածի կողմից իրականացված ներդրումների ծավալները:

Վերը նշված զարգացումների մասին են վկայում նաև ՀՀ ԿԲ կողմից հաշվարկվող և հրապարակվող տնտեսական բաղադրյալ ինդեքսները¹⁰: 2010 թվականի չորրորդ եռամսյակում սպառողների վստահության ինդեքսն աճել է 8%-ով, ընդ որում՝ ընթացիկ պայմանների ինդեքսն աճել է 6.8%-ով, իսկ ապագա պայմանների ինդեքսը՝ 8.7%-ով: Տնտեսական ակտիվության և գործարար միջավայրի ինդեքսները համապատասխանաբար աճել են 14.5% և 7.7%-ով:

Չնայած չորրորդ եռամսյակի ընթացքում մասնավոր ծախսումներն ավելացել են, սակայն գնաճի վրա դրանք դեռևս զսպող ազդեցություն են ունեցել: Այսպես. ըստ ՀՀ ԿԲ գնահատումների, մասնավոր իրական ծախսումների գնահատված մակարդակը ցածր է եղել պոտենցիալ մակարդակից 0–1%-ով: Դա գնանկումային ճնշումներ է առաջացրել սպառողական շուկայում՝ նվազեցնելով գնաճը 0.2 - 0.4 տոկոսային կետով:

2010 թ. չորրորդ եռամսյակի ընթացքում համաշխարհային և ներքին տնտեսությունների զարգացումների պայմաններում ընթացիկ հաշվի տ/տ բարելավման միտումը շարունակվել է: Եռամսյակի ընթացքում արագացել են հիմնական մետաղների միջազգային գների աճի տեմպերը, ինչը գերազանցել է սպասումները: Արդյունքում՝ չորրորդ եռամսյակում արձանագրվել է ապրանքների և ծառայությունների արտահանման¹¹ (դոլարային արտահայտությամբ) տ/տ 31.2% աճ, իսկ իրական ծավալների աճը կազմել է տ/տ 9.1%: 2010 թ. տարեկան արդյունքներով ապրանքների և ծառայությունների դոլարային արտահայտությամբ և իրական աճը համապատասխանաբար կազմել է 35.4% և 12.1%:

Չորրորդ եռամսյակում գրանցվել է ապրանքների և ծառայությունների ներմուծման¹² ցածր (դոլարային արտահայտությամբ)՝ տ/տ 2.6% աճ, ինչը հիմնականում պայմանավորվել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածում մեքենասարքավորումների ներմուծման մեծ ծավալներով: Ապրանքների և ծառայությունների ներմուծման իրական

⁸ 2010 թվականի պետական ծախսումների նվազումն արձանագրվել է պետական ծախսումների դեֆյուսիտի բարձր մակարդակի պարագայում:

⁹ Շինարարության ոլորտի համախառն թողարկման ծավալները չորրորդ եռամսյակում թեև նվազել են, սակայն արձանագրվել է ճյուղի ավելացված արժեքի աճ:

¹⁰ Տե՛ս http://www.cba.am/CBA_SITE/statistics/complex_index.html?__locale=hy

¹¹ Հունվար-դեկտեմբեր ամիսներին ապրանքների արտահանման (ՖՕՔ) աճը կազմել է 42.4%: Ծառայությունների արտահանման չորրորդ եռամսյակի ցուցանիշը կանխատեսում է:

¹² Հունվար-դեկտեմբեր ամիսներին ապրանքների ներմուծման աճը կազմել է 13.9%: Ծառայությունների ներմուծման չորրորդ եռամսյակի ցուցանիշը կանխատեսում է:

ծավալների նվազումը մեծ է եղել և չորրորդ եռամսյակում կազմել է տ/տ 7.0%: Սա պայմանավորված է տնտեսավարող սուբյեկտների բյուջետային սահմանափակման պայմաններում ներմուծման գների աճի տեմպերի արագացմամբ: 2010 թ. ապրանքների և ծառայությունների ներմուծման դոլարային արտահայտությամբ և իրական աճը համապատասխանաբար կազմել է 14.3% և 4.3%:

Ինչ վերաբերում է ոչ առևտրային բնույթի փոխանցումներին, ապա վերջիններիս ներհոսքի տ/տ աճի բարձր տեմպերը պահպանվել են չորրորդ եռամսյակում ևս: Այսպես, ոչ առևտրային բնույթի փոխանցումների ներհոսքը եռամսյակում ավելացել է տ/տ 20.7%-ով՝ արտահոսքի տ/տ 7.7% աճի պարագայում: Արդյունքում՝ դրանց զուտ ներհոսքի աճը չորրորդ եռամսյակում կազմել է տ/տ 23.5%, իսկ 2010թ. ընթացքում՝ 15.4%:

Վերը նշված զարգացումների արդյունքում ընթացիկ հաշիվը 2010 թ. բարելավվել է և, ըստ գնահատումների, կկազմի ՀՆԱ մոտ 14.0%-ը՝ նախորդ տարվա 16.2%-ի փոխարեն:

Համախմբված բյուջե¹³

2010 թվականի չորրորդ եռամսյակում հարկաբյուջետային հատվածը համախառն պահանջարկի վրա ունեցել է կանխատեսվածից փոքր-ինչ ավելի մեծ ընդլայնող ազդեցություն՝ կազմելով 4.6 տոկոսային կետ: Վերջինս պայմանավորված է ինչպես եկամուտների, այնպես էլ ծախսերի ընդլայնող ազդակներով:

Ամփոփելով տարվա արդյունքները՝ հարկ է նշել, որ Կառավարության կողմից իրականացված հարկաբյուջետային քաղաքականությունը կարելի է բնութագրել որպես ՀՆԱ-ում պակասորդի կրճատմանն ուղղված քաղաքականության իրականացում, որը դրսևորվել է եկամուտների գերակատարմամբ և ծախսերի որոշ տնտեսմամբ: Հարկաբյուջետային քաղաքականությունը ամբողջական պահանջարկի վրա ունեցել է 3.5 տոկոսային կետ ընդլայնող ազդեցություն, ինչը պայմանավորված էր եկամուտների փոքր-ինչ զսպող և ծախսերի ընդլայնող ազդակների ձևավորմամբ: Ընդ որում, ընդլայնող ազդեցության գերակշիռ մասը առավել արտահայտվել է տարվա առաջին և հատկապես՝ վերջին եռամսյակներում:

Ինչ վերաբերում է 2009 թվականի տվյալների հետ համախմբված բյուջեի ցուցանիշների համեմատությանը, ապա եկամուտների և ծախսերի մասով արձանագրվել է համապատասխանաբար 12.3% և 1.6% աճ: Ընդ որում, պետական բյուջեի հարկային եկամուտների աճը կազմել է մոտ 13.7%:

Ամփոփելով նշենք, որ 2010 թվականի չորրորդ եռամսյակում հարկաբյուջետային հատվածը համախառն պահանջարկի վրա ունեցել է ընդլայնող ազդեցություն՝ պայմանավորված հիմնականում դեկրետներ ամսվա ընթացքում իրականացված մեծածավալ պետական ծախսումներով: Հաշվի առնելով նաև աշխատանքի շուկայի առաջացրած թույլ գնաճային և պահանջարկի դեռևս ոչ բավարար աճով պայմանավորված գնանկումային ճնշումները՝ կարելի է փաստել, որ ներքին պահանջարկի և աշխատանքի շուկայի զուտ ազդեցությունը 2010 թվականի չորրորդ եռամսյակում եղել է գնաճային և գնահատվում է 1.6 - 1.8% տոկոսային կետ:

¹³ Հարկաբյուջետային ազդակը գնահատվել է 2008 թվականի չորրորդ եռամսյակի համախմբված բյուջեի ցուցանիշների նկատմամբ (դիտարկելով 2008 թվականը որպես բազիսային տարի), քանի որ 2009 թվականին հարկաբյուջետային քաղաքականությունն ունեցել է զգալի ազդեցություն՝ պայմանավորված հակաճանաժամային միջոցառումների իրականացմամբ: Հարկ է նշել, որ եկամուտների ազդեցությունը հաշվարկվել է փաստացի ՀՆԱ անվանական ցուցանիշի, իսկ ծախսերի ազդակը՝ գնահատված պոտենցիալ ՀՆԱ ցուցանիշի նկատմամբ:

Փող և վարկ

2010 թվականի հոկտեմբեր-նոյեմբերին արդեն ակնհայտ էր, որ ամիսներ շարունակ առաջարկի շուկերով պայմանավորված, գնաճը սկսել է ձևավորել գնաճային սպասումներ, ինչպես նաև ընդհանուր գնաճի վրա թողնում է երկրորդային ազդեցություններ: Չնայած չորրորդ եռամսյակում ԿԲ-ն անփոփոխ է թողել վերաֆինանսավորման տոկոսադրույքը, այդուհանդերձ, նոյեմբերից որոշակիորեն ազդակներ է հաղորդել դրամավարկային պայմանների հետագա խստացման վերաբերյալ:

Ֆինանսական շուկային նման ազդակներ հաղորդելուց հետո, չորրորդ եռամսյակում արձանագրվել է հետևյալ պատկերը. միջբանկային և ներբանկային ռեպո շուկաներում միջին տոկոսադրույքը երրորդ եռամսյակի համեմատ աճել է 0.48 տոկոսային կետով՝ կազմելով 7.61%, միջբանկային ռեպո շուկայում միջին տոկոսադրույքն աճել է 0.23 տոկոսային կետով՝ կազմելով 6.83%: ՊՊ առաջնային շուկայում նախորդ եռամսյակի համեմատ նկատվել է տոկոսադրույքների նվազում՝ պայմանավորված չորրորդ եռամսյակում պետբյուջեի մեծ պակասուրդի և արտարժույթային շուկայի զարգացումների արդյունքում ձևավորված իրացվելիության բարձր մակարդակով: Մասնավորապես՝ մինչև 1 տարի մարման ժամկետայնությամբ պարտատոմսերի միջին տոկոսադրույքը նվազել է 1.19 տոկոսային կետով՝ կազմելով 9.10%:

2010 թ. չորրորդ եռամսյակի ընթացքում արտարժույթի շուկայում դրամի միջին շուկայական փոխարժեքը, նախորդ եռամսյակի համեմատ, 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է 1.33%-ով՝ կազմելով 360.73 դրամ, եվրոյի նկատմամբ արժեզրկվել է 3.72%-ով՝ կազմելով 490.43 դրամ, ՌԴ ռուբլու նկատմամբ արժեզրկվել է 0.85%-ով՝ կազմելով 11.75 դրամ:

Ինչ վերաբերում է դրամավարկային ցուցանիշների միտումներին, ապա չորրորդ եռամսյակի ընթացքում գրանցված աճը զգալիորեն գերազանցել է ակնկալիքները: Փողի զանգվածն ավելացել է 12.5%-ով, դրամային զանգվածը՝ 14.0%-ով՝ փողի և դրամային բազաների համապատասխանաբար 15.8% և 14.1% աճի պարագայում: Եռամսյակի ընթացքում շրջանառությունում եղած կանխիկն ավելացել է 11.9%-ով, դրամային ավանդները՝ 17.0%-ով, իսկ արտարժույթային ավանդները՝ 10.6%-ով (բացառելով փոխարժեքի փոփոխության ազդեցությունը՝ շուրջ 10%-ով): Արդյունքում, դոլարայնացման մակարդակը նախորդ եռամսյակի համեմատությամբ նվազել է 1.6%-ով: Այդ ժամանակահատվածում տնտեսության վարկավորման աճը կազմել է 10.1%:

Ընդհանուր առմամբ, տարեսկզբից դրամավարկային պայմանների խստացումն ու պարտադիր պահուստավորման մեխանիզմի փոփոխությունը (ներգրավված արտարժույթային միջոցների 50%-ի դիմաց դրամով պահուստավորման իրականացում) իրենց ակնհայտ արտացոլումն են գտել դրամավարկային ցուցանիշների տարեկան վարքագծերում: Այսպես. դրամային բազայի 12.8% աճի և փողի բազայի 0.8% նվազման պարագայում դրամային զանգվածն ավելացել է 15.7%-ով, իսկ փողի զանգվածը՝ 11.8%-ով: Շրջանառությունում գտնվող կանխիկն ավելացել է 7.7%-ով, դրամային և արտարժույթային ավանդները՝ համապատասխանաբար 29.0% և 7.0%-ով (բացառելով փոխարժեքի փոփոխության ազդեցությունը՝ 11.4%-ով): Արդյունքում՝ դոլարայնացման մակարդակը նվազել է 4.2%-ով: Արձանագրվել է վարկավորման ծավալների 26.7% աճ, ընդ որում՝ դրամային վարկերն ավելացել են շուրջ 14.0%-ով, իսկ արտարժույթային վարկերը՝ 37.7%-ով (բացառելով փոխարժեքի փոփոխության ազդեցությունը՝ 43.2%-ով): Վերջինիս համար, արտարժույթային ավանդների համեմատաբար ցածր աճի տեմպերի պարագայում, հիմնական աղբյուր են ծառայել ԿԲ-ում առևտրային բանկերի՝ արտարժույթով թղթակցային հաշիվների ավելցուկային միջոցները և արտասահմանից ներգրավված վարկային ռեսուրսները:

ՀԱՋՈՐԴՈՂ 12 -ԱՄՍՅԱ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

Արտաքին միջավայր¹⁴

Հունվարին վերանայված ԱՄՀ կանխատեսումների համաձայն՝ համաշխարհային տնտեսության աճի տեմպերը 2011թ. կկազմեն 4.4%, ինչը 0.2 տոկոսային կետով բարձր է հոկտեմբերի կանխատեսումներից: Համաշխարհային գնաճի 2011 թ. կանխատեսումները նույնպես վերանայվել են աճի ուղղությամբ: Զարգացած և զարգացող երկրներում գնաճի բարձր տեմպերը կպահպանվեն և 2011 թ. կկազմեն համապատասխանաբար 1.6% և 6.0%: Չնայած համաշխարհային տնտեսությունը արագ վերականգնման փուլից հետո աստիճանաբար թևակոխում է առավել կայուն և դանդաղ աճի շրջան, այնուամենայնիվ 2011 թ. համաշխարհային տնտեսական աճի տեմպը շուրջ 0.6 տոկոսային կետով բարձր է նախորդ 5 տարիներին արձանագրված միջին ցուցանիշից: Ինչպես 2010 թ., 2011 թ. ևս համաշխարհային տնտեսության աճը կպայմանավորեն զարգացող երկրները, որոնց ներքին պահանջարկը ապահովել է 2010 թ. համաշխարհային տնտեսական աճի շուրջ 46%-ը: Աշխարհի առաջատար և Հայաստանի հիմնական գործընկեր երկրներից՝ Եվրոգոտու տնտեսական աճի սպասվող տեմպը 2011 թ. համար կանխատեսվում է 1.5%՝ 2010 թ. համար գնահատվող 1.8%-ի փոխարեն: ԱՄՆ տնտեսության աճի տեմպը 2011 թ. փոքր-ինչ ավելի կլինի 2010 թ. գրանցված 2.8%-ից և կկազմի 3.0%: Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա վերջինիս տնտեսական աճի տեմպը 2011 թ. կգերազանցի 2010 թ. գնահատվող 3.7% մակարդակը՝ կազմելով 4.5%:

Միջազգային ապրանքային շուկաներում 2011թ. հիմնականում կպահպանվի 2010 թ. վերջին ձևավորված գների բարձր մակարդակը, և գների միջին տարեկան աճի տեմպերը կգրանցեն զգալիորեն բարձր ցուցանիշներ: Միևնույն ժամանակ, առանձին ապրանքային շուկաներին ներհատուկ զարգացումները (օրինակ՝ եղանակային պայմանները) կպայմանավորեն տվյալ ապրանքների գծով հնարավոր առավել բարձր կամ ցածր գնաճային ռիսկեր:

2011 թ. կանխատեսվում է նավթի միջազգային գների որոշակի աճ, որը կձևավորվի դեռևս հունվարին արձանագրված շուրջ 98 ԱՄՆ դոլարի շրջակայքում՝ մեկ բարելի դիմաց: Համաձայն Էներգիայի միջազգային կազմակերպության գնահատումների՝ 2011թ. հիմնականում կպահպանվի 2010 թ. վերջին արձանագրված նավթի համաշխարհային պահանջարկի բարձր մակարդակը, որը գնահատվում է օրական շուրջ 89 մլն բարել, ինչը գրեթե համընկնում է սպասվող արդյունահանման ծավալներին, որի պայմաններում մասնավորապես ՕՊԵԿ-ի չօգտագործված արդյունավետ պաշարները վերջին երկու տարիներին առաջին անգամ կձևավորվեն օրական 5 մլն բարել մակարդակից ցածր: Միաժամանակ, Մերձավոր Արևելքի վերջին զարգացումները ռիսկեր են պարունակում՝ նավթի գների ավելի բարձր մակարդակի ձևավորման առումով:

Արդյունաբերական և թանկարժեք մետաղների գները 2011 թ. հիմնականում կդրսևորեն աճի միտումներ: Մասնավորապես՝ պղնձի միջազգային գները կձևավորվեն 9000 ԱՄՆ դոլարի սահմաններում: Պղնձի միջազգային գների կանխատեսվող վարքագիծը կպայմանավորվի զարգացող երկրների (հատկապես Չինաստանի) կողմից ներկայացվող մեծածավալ պահանջարկով, առկա պաշարների ցածր մակարդակով և առաջարկի սահմանափակությամբ: Միևնույն ժամանակ, շուկայի նման լարվածությունը չի հանգեցնի գների էական բարձրացումների, քանի որ դրանք 2010 թ. վերջի և 2011 թ.

¹⁴ Արտաքին միջավայրի կանխատեսումների համար հիմք է ծառայել IMF, World Bank, The Economist, Global Insight, Financial Times, US Department of Agriculture, РосБизнесКонсалтинг և այլ աղբյուրների տեղեկատվությունը:

սկզբի դրությամբ արդեն գտնվում են բավականին բարձր մակարդակում (համեմատած արտադրության ծախսերի հետ), ինչպես նաև առկա են փոխարինման հնարավորություններ (մասնավորապես՝ այլումին, որի համաշխարհային շուկայում ներկայումս առկա է որոշակի ավելցուկ):

Ինչ վերաբերում է թանկարժեք մետաղներին, մասնավորապես՝ ոսկուն, ապա վերջինիս գինը կկայունանա 1 ունցիայի դիմաց 1360-1370 ԱՄՆ դոլարի միջակայքում՝ պայմանավորված զարգացած երկրներում ցածր տոկոսադրույքների պայմաններում ոսկու նկատմամբ պահանջարկի պահպանմամբ:

Հացահատիկի շուկայում գները հիմնականում կունենան չափավոր աճի միտումներ: Սա կպայմանավորվի հարավային կիսագնդում՝ Ավստրալիայում դիտարկվող ոչ բարենպաստ եղանակային պայմանների (արևմտյան շրջանում՝ չոր երաշտային, արևելյան հատվածում՝ խիստ անձրևային) հետևանքով սպասվող բերքի ծավալների էական կրճատմամբ, ինչպես նաև հյուսիսային կիսագնդում աշնանացան հացահատիկի բերքի հետ կապված որոշակի անորոշությունների պահպանմամբ: ԱՄՆ Գյուղապետոդեպարտամենտի՝ հունվարի գնահատումների համաձայն՝ 2010/2011 մարքեթինգային տարում սպասվում է մոտ 646 մլն տոննա հացահատիկի բերք՝ նախորդ՝ 2009/2010-ին գրանցված շուրջ 683 մլն տոննայի փոխարեն: Հիմնականում Չինաստանի սննդի ոլորտից եկող պահանջարկի մեծ ծավալներով պայմանավորված հացահատիկի համաշխարհային պահանջարկը կանխատեսվում է 665 մլն տոննա, ինչի պարագայում հացահատիկի համաշխարհային պաշարները նախորդ տարվա համեմատ կնվազեն շուրջ 20 մլն տոննայով՝ կազմելով 178 մլն տոննա՝ արտահայտելով Ռուսաստանի և ԵՄ պաշարների կրճատումը: Արդյունքում՝ հացահատիկի գները 2011 թ. կձևավորվեն 1 բուշելի դիմաց 8.5 ԱՄՆ դոլարի շրջակայքում:

Շաքարավազի միջազգային գները ևս հիմնականում կդրսևորեն որոշակի աճի միտումներ: Սա պայմանավորված կլինի համաշխարհային աննախադեպ պահանջարկով: Համաձայն ԱՄՆ Գյուղապետոդեպարտամենտի գնահատումների՝ 2010/11 մարքեթինգային տարում շաքարավազի արտադրանքի սպասվող ծավալները կկազմեն 161.9 մլն տոննա, իսկ կանխատեսվող սպառման 158.9 մլն տոննա ծավալի պարագայում վերջնական պաշարները կկազմեն 26.5 մլն տոննա: Շուկայում սպասվող լարվածությունը կարող է առավել ուժգնանալ որոշակի քաղաքական բնույթի հիմնախնդիրներով (ԵՄ, Հնդկաստան), ինչպես նաև աշխարհի առաջատար արտադրող Բրազիլիայում 2011 թ. ակնկալվող ցածր բերքի սպասումներով պայմանավորված: Արդյունքում՝ շաքարավազի գները 2011 թ. կձևավորվեն 1 ֆունտի դիմաց 38 ցենտի սահմաններում: Բրնձի շուկայում գները հիմնականում կպահպանվեն տարեսկզբին ձևավորված մակարդակներում՝ ունենալով որոշակի աճի միտումներ: Անկասկած, սպասվող ռեկորդային ծավալներով բերքի¹⁵ և հիմնական արտահանող երկրներում կուտակված մեծածավալ պաշարների (վերջին 10 տարիների առավելագույն ցուցանիշ) առկայության¹⁶ պայմաններում, այս շուկայում հիմնական կանխատեսվող միտումը գնանկումային է: Այնուամենայնիվ, պայմանավորված տարբեր շուկայական ու քաղաքական բնույթի գործոններով, մասնավորապես՝ բրնձի և հացահատիկի փոխադարձ փոխարինելիության հանգամանքով, Պակիստանի և Վիետնամի արտադրության ցածր ծավալների սպասումներով, Հնդկաստանի կողմից դեռևս պահպանվող արտահանման սահմանափակումներով, Եգիպտոսի կառավարության կողմից արտադրողներին աջակցության կրճատման և ոռոգման սահմանափակումների կիրառման պարագայում այս երկրում բրնձի ցանքատարածու-

¹⁵ ԱՄՆ Գյուղապետոդեպարտամենտի բրնձի 2010/2011 մարքեթինգային տարվա համար սպասվող բերքի ծավալները հունվարին գնահատել է 452.4 մլն տոննա:

¹⁶ Բրնձի համաշխարհային պաշարները ԱՄՆ Գյուղապետոդեպարտամենտի կողմից 2010/2011 մարքեթինգային տարվա համար գնահատվել են 94.4 մլն տոննա:

թյունների էական կրճատմամբ, գնաճային ճնշումները այս ապրանքի միջազգային շուկաներում կշարունակեն պահպանվել: Վերջինիս կնպաստի նաև համաշխարհային աճող պահանջարկը, որը, ըստ գնահատումների, կգերազանցի համաշխարհային արտադրության ծավալները՝ կազմելով 452.7 մլն տոննա: 2011թ. բրնձի գները կձևավորվեն 1 ֆունտի դիմաց 14 ցենտի սահմաններում:

Ֆինանսական շուկաներում 2011 թ-ին կանխատեսվում է եվրոյի փոխարժեքի որոշակի արժեզրկում՝ պայմանավորված Եվրոգոտում պարտքային հիմնախնդիրների հնարավոր տարածման մտավախությունների ներքո շուկայում առկա անորոշություններով:

2011 թ. համաշխարհային տնտեսության արագ աճին խոչընդոտող հիմնական գործոններ կարող են լինել Եվրոգոտում պարտքային հիմնախնդիրների սրումը, համաշխարհային մակարդակով հարկաբյուջետային կոնսոլիդացիայի իրականացման ներքո տնտեսությանն ուղղված խթանների սահմանափակումը, զարգացած երկրներում ցածր տոկոսադրույքների պահպանման պայմաններում դեպի զարգացող երկրներ մեծածավալ և հիմնականում կարճաժամկետ կապիտալ հոսքերի հետևանքով այդ երկրներում փոխարժեքի և գների ապակայունացնող զարգացումները, ինչպես նաև պարենային և հիմնական հումքային ապրանքների համաշխարհային գների հնարավոր կտրուկ բարձրացումները: Նման պայմաններում 2011 թ-ին տնտեսական քաղաքականությունների համատեքստում առաջնային խնդիրները կլինեն հարկաբյուջետային կոնսոլիդացիային զուգահեռ տնտեսական համարժեք խթանների ձևավորումը, զարգացած երկրներում զբաղվածության ապահովմանն ուղղված կառուցվածքային վերափոխումների իրականացումը և ֆինանսական համակարգերի ամրացումը, զարգացող երկրներում՝ կապիտալի մեծածավալ հոսքերի կառավարումը: Այս պարագայում զարգացած երկրներում դրամավարկային քաղաքականությունը հիմնականում կշարունակի պահպանել համեմատաբար մեղմ միջավայրը, իսկ զարգացող երկրներում ձևավորվող գնաճային ճնշումները հիմք կդառնան դրամավարկային քաղաքականությունների կոշտացման համար:

Ամփոփենք. 2011 թ. համաշխարհային տնտեսության սպասվող աճի պայմաններում հիմնական ապրանքային շուկաներում կդրսևորվեն չափավոր գնաճային միտումներ՝ հիմնականում պահպանելով տարեվերջին ձևավորված գների բարձր մակարդակները:

Համախառն առաջարկ

2011 թվականի առաջին եռամսյակում կատարված կանխատեսումները էականորեն չեն տարբերվել 2010 թվականի չորրորդ եռամսյակի կանխատեսումներից, քանի որ մակրոտնտեսական զարգացումները հիմնականում պահպանվել են կանխատեսվածին համապատասխան: Արդյունքում՝ 2011 թվականին ակնկալվում է շուրջ 4.1 – 5.7%¹⁷ տնտեսական աճ:

Տնտեսության ճյուղերում ակնկալվում են հետևյալ զարգացումները.

Արդյունաբերության ճյուղում 2011 թվականին ակնկալվում է ավելացված արժեքի շուրջ 6 - 8% աճ, որին հիմնականում կնպաստեն համաշխարհային շուկաներում գունավոր մետաղների գների բարձր մակարդակի պահպանման պարագայում հանքարդյունաբերության և մետաղագործության կանխատեսվող աճը, համաշխարհային և ներքին տնտեսության շարունակական վերականգնման պարագայում սննդամթերքի և խմիչքնե-

¹⁷ Տե՛ս ՀՆԱ իրական աճի (կուտակային) կանխատեսման հավանականությունների բաշխման գծանկարի 30% հավանականության միջակայքը:

րի արտադրության ծավալների սպասվող աճը, նախորդ տարվա ընթացքում ՋԷԿ-երում արդյունավետ տեխնոլոգիաների ներդրման և վերականգնվող էներգետիկայի բնագավառում իրականացված և նախատեսվող ներդրումային ծրագրերի կատարման պարագայում էլեկտրաէներգիայի արտադրության կանխատեսվող աճը:

Շինարարության ճյուղում չնայած կանխատեսվում է աճի տեմպերի որոշակի արագացում, այնուամենայնիվ, ճյուղի ավելացված արժեքի իրական աճը դեռևս մնում է համեմատաբար փոքր՝ 2 – 4%՝ հիմնականում պայմանավորված էներգետիկայի, գյուղատնտեսության, տրանսպորտի և կապի ոլորտներում իրականացվող շինարարության ծավալների աճով: Ընդ որում, բնակչության միջոցների հաշվին իրականացվող շինարարության ծավալների էական փոփոխություններ չեն ակնկալվում:

Ծառայությունների ճյուղում ավելացված արժեքի իրական աճը կանխատեսվում է 3.5 - 5.5%-ի շրջանակներում՝ հիմնականում պայմանավորված մասնավոր և պետական ծախսումների ակնկալվող աճով, որն անդրադառնալու է ինչպես առևտրաշրջանառության ծավալների, այնպես էլ մատուցված այլ ծառայությունների ծավալների վրա:

Գյուղատնտեսության ճյուղում ավելացված արժեքի իրական աճը կանխատեսվում է 7 - 9%-ի շրջանակներում, որին նպաստելու է ինչպես բուսաբուծության, այնպես էլ անասնապահության ենթաճյուղերում ակնկալվող աճը:


Գյուղատնտեսությունում խոշոր ներդրումների բացակայության պատճառով արտադրողականությունը գրեթե անփոփոխ է մնում, որի պարագայում, մասնավորապես՝ բուսաբուծությունում, թողարկման ծավալները կախված են առավելապես բնակլիմայական պայմաններից¹⁸: Ուստի, գյուղատնտեսության աճի կանխատեսման ժամանակ ընտրվել է ամենաքիչ ռիսկային տարբերակը:

Տնտեսական աճի ռիսկերը երկկողմանի են և կապված են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործոնների հետ: Ընդ որում, գերակշռող են աճի ուղղությամբ ռիսկերը՝ պայմանավորված ինչպես համաշխարհային տնտեսության վերականգնման տեմպերի արագացման և ներքին պահանջարկի՝ ակնկալվածից ավելի բարձր աճով, այնպես էլ տնտեսության բոլոր ճյուղերում կանխատեսված ցուցանիշների աճի ուղղությամբ ռիսկերի դրսևորմամբ:

Մասնավորապես՝ աճի ուղղությամբ գերակշռող ռիսկերը արդյունաբերության ճյուղում հիմնականում կպայմանավորվեն համաշխարհային տնտեսության ավելի արագ տեմպերով վերականգնմամբ, շինարարության և ծառայությունների ճյուղերում՝ նախատեսվող ներդրումային խոշորածավալ ծրագրերի իրականացման արագությամբ: Իսկ գյուղատնտեսությունում, չնայած վերջինիս մեծ կախվածությանը բնակլիմայական պայմաններից, որոնք կարող են հանգեցնել երկկողմանի ռիսկերի դրսևորման, այնուամենայնիվ, գերակշռում են աճի ուղղությամբ ռիսկերը՝ կապված ցորենի ցանքատարածությունների ընդլայնման և «Գյուղական կարողությունների ստեղծման» ծրագրի շրջանակներում իրականացվելիք ներդրումների հետ:

¹⁸ Հաշվի առնելով գյուղատնտեսության ճյուղում նախատեսվող միջոցառումների միջնաժամկետ բնույթը, 2011 թվականին դրանք դեռ էական ազդեցություն չեն ունենա ճյուղի արտադրողականության վրա:

ՀՆԱ իրական աճի (կուրակային) կանխարեսման հավանականությունների բաշխում¹⁹



Տնտեսական աճի կանխարեսման հավանականությունների բաշխում

Տնտեսական աճի միջակայքը	Տնտեսական աճի՝ տվյալ միջակայքում գտնվելու հավանականություն	
	2011 թ. II եռ.	2011 թ. VI եռ.
< 1%	0.00%	0.44%
1 - 3%	5.98%	8.66%
3 - 7%	89.84%	67.81%
7 - 9%	4.00%	17.39%
9% <	0.13%	5.65%

ՀՆԱ իրական աճի կանխատեսման հավանականային բաշխում				
Ժամանակահատված	90% հավանականության միջակայք		30% հավանականության միջակայք	
	նվազագույն	առավելագույն	նվազագույն	առավելագույն
2011 հունվար-մարտ / 2010 հունվար-մարտ	3.1	5.1	3.7	4.1
2011 հունվար-հունիս / 2010 հունվար-հունիս	2.7	6.0	3.6	4.4
2011 հունվար-սեպտեմբեր / 2010 հունվար-սեպտեմբեր	2.7	7.7	4.1	5.2
2011 հունվար-դեկտեմբեր / 2010 հունվար-դեկտեմբեր	2.3	8.9	4.1	5.7

¹⁹ Այսուհետք հավանականությունների բաշխման գրաֆիկը կներկայացվի ՀՆԱ իրական կուրակային աճի ցուցանիշների հիման վրա՝ նախկինում հրապարակված ՀՆԱ իրական եռամսյակային աճի ցուցանիշների փոխարեն:

Աշխատանքի շուկա²⁰

Աշխատուժի պահանջարկի վերաբերյալ 2011 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածի կանխատեսումները վերանայվել են աճի ուղղությամբ. կանխատեսվող ժամանակահատվածում սպասվում է անվանական աշխատավարձերի ավելի բարձր և գործազրկության մակարդակի ավելի ցածր մակարդակ՝ նախորդ կանխատեսումների համեմատ:

Մասնավորապես՝ 2011 թվականին ակնկալվում է տնտեսության միջին անվանական աշխատավարձերի մոտ 7.8% աճ՝ պայմանավորված մասնավոր հատվածում արտադրողականության շարունակական աճով և բյուջետային ֆինանսավորում ունեցող որոշ կազմակերպություններում աշխատավարձերի չափավոր աճով: Կանխատեսվող ժամանակահատվածում անվանական աշխատավարձերի աճի վրա էական ազդեցություն կունենա նաև գործազրկության կրճատումը և 2011 թվականի առաջին կիսամյակում գնաճային միջավայրի պահպանումը:

Տնտեսական աճի շարունակական միտումների պայմաններում 2011 թվականին կշարունակի աճել աշխատուժի նկատմամբ պահանջարկը՝ հիմնականում ի հաշիվ արդյունաբերության և ծառայության ճյուղերում թողարկման ծավալների աճի, որի արդյունքում տնտեսությունում կնվազի գործազուրկների թվաքանակը: Այս պարագայում պաշտոնապես գրանցված գործազրկության միջին մակարդակը 2011 թվականին կնվազի 0.4 տոկոսային կետով և կկազմի 6.6%:

Նշված զարգացումներով պայմանավորված՝ 2011 թվականի ընթացքում անվանական աշխատավարձերի աճի տեմպը փոքր-ինչ կգերազանցի արտադրողականության աճի տեմպերը՝ հանգեցնելով միավոր աշխատուժի ծախսերի չափավոր աճի, որի հետևանքով տարվա ընթացքում տնտեսությունում կնկատվեն թույլ գնաճային ճնշումներ՝ 0.2 - 0.4%:

Համախառն պահանջարկ²¹

Մասնավոր հատվածի ծախսումներ

Մասնավոր հատվածի ծախսումների՝ 2011 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածի կանխատեսումները փոքր-ինչ վերանայվել են աճի ուղղությամբ, որի համար հիմք է հանդիսացել տնտեսական աճի և արտասահմանից տրանսֆերտների ներհոսքի աճի շարունակականությունը, ինչպես նաև մասնավոր հատվածի վարկավորման ծավալների աճը:

Ըստ վերանայված գնահատումների՝ 2011 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում ակնկալվում է մասնավոր ծախսումների մոտ 9% աճ՝ պայմանավորված ինչպես մասնավոր սպառման, այնպես էլ մասնավոր ներդրումների աճով: Մասնավոր ծախսումների վերը նշված աճի և պետական ծախսումների փոքր աճի պարագայում տնտեսությունում ներքին պահանջարկը կավելանա 5.5%-ով:

²⁰ Աշխատանքի շուկայի 2011 թվականի տվյալները ՀՀ ԿԲ գնահատումներն են՝ հիմնված 2010 թվականի երրորդ եռամսյակի և 2010 թվականի հոկտեմբեր, նոյեմբեր ամիսների՝ ԱՎԾ կողմից հրատարակված փաստացի ցուցանիշների վրա: Ենթաբաժնում ներկայացված աճի ցուցանիշները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ են, եթե այլ բան նշված չէ:

²¹ Մասնավոր սպառման և ներդրումների իրական աճի 2011 թվականի ցուցանիշները ՀՀ ԿԲ գնահատումներն են: Նշված ցուցանիշների փաստացի թվերը 2010 թվականի երրորդ եռամսյակի՝ ՀՀ ԱՎԾ կողմից հրատարակված տվյալներն են: Ենթաբաժնում ներկայացված իրական աճի գնահատումները նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ են, եթե այլ բան նշված չէ:

Մասնավոր ծախսումների կառուցվածքում մասնավոր ներդրումները կավելանան մոտ 20%-ով՝ արտահայտելով տնտեսավարող սուբյեկտների դրական սպասումները, արտասահմանից տրանսֆերտների աճը և արտաքին ու ներքին պահանջարկի կայուն վերականգնումը: Մասնավոր ներդրումների համար հիմնական ֆինանսավորման աղբյուր կհանդիսանան սեփական միջոցները և մասնավոր հատվածին տրամադրվող վարկերը:

Մասնավոր սպառումը կավելանա 6%-ով՝ պայմանավորված մասնավոր տնօրինվող եկամուտների աճով՝ ի հաշիվ ՀՆԱ իրական աճի և արտասահմանից դրամական փոխանցումների:

Մասնավոր ծախսումների շարունակական աճի արդյունքում 2011 թվականի առաջին եռամսյակում կչեզոքանա մասնավոր ծախսումների և դրանց պոտենցիալ մակարդակի միջև ձևավորված ճեղքվածքը, որն առաջացել էր 2009 թվականին՝ ճգնաժամի հետևանքով: 2011 թվականի երկրորդ եռամսյակից մինչև չորրորդ եռամսյակն ընկած ժամանակահատվածում մասնավոր ծախսումների ճեղքվածքը կլինի զրոյին մոտ (դրական): Նշված զարգացումների արդյունքում 2011 թվականի ընթացքում մասնավոր ծախսումները բավականին մոտ կլինեն պոտենցիալ մակարդակին և գնաճի վրա կունենան չեզոք ազդեցություն: Սակայն նշենք, որ տնտեսության վարկավորման ծավալների աճի (ի հաշիվ արտերկրյա միջոցների ներգրավման) տեմպերի արագացման դեպքում մասնավոր ծախսումների ճեղքվածքը կարող է մեծանալ և տնտեսությունում առաջացնել գնաճային ճնշումներ:

Ընթացիկ հաշիվ

Համաշխարհային և ներքին տնտեսությունների ակնկալվող նոր զարգացումները հաշվի առնելով՝ 2011 թ. ընթացիկ հաշվի հիմնական տարրերի կանխատեսումները վերանայվել են: Համաշխարհային շուկաներում հիմնական մետաղների գների բարձր մակարդակի պահպանման (դեռևս չորրորդ եռամսյակում վերջիններիս աճը գերազանցեց սպասումները) և արդյունաբերության ակնկալվող աճի բարձր տեմպերի պայմաններում ապրանքների և ծառայությունների դոլարային և իրական աճերը վերանայվել են աճի ուղղությամբ: Այսպես՝ 2011 թ. ակնկալվում է ապրանքների և ծառայությունների դոլարային արտահանման աճ՝ 13 - 15% միջակայքում և իրական ծավալների աճ՝ 6 - 8% միջակայքում: Արտահանման ռիսկերը կարող են դրսևորվել և՛ աճի, և՛ նվազման ուղղությամբ՝ պայմանավորված համաշխարհային տնտեսության, հիմնական մետաղների միջազգային գների և արդյունաբերության զարգացումներով: Ապրանքների և ծառայությունների ներմուծման աճի տեմպի ցուցանիշը ևս վերանայվել է աճի ուղղությամբ: Ներմուծման գների ակնկալվող աճի բարձր տեմպերի պահպանման և ներքին տնտեսության դրական զարգացումների ներքո 2011 թ. ակնկալվում է ապրանքների և ծառայությունների ներմուծման դոլարային աճ՝ 9 - 11% միջակայքում: 2011 թ. առաջին կիսամյակում սպասվում է ապրանքների և ծառայությունների ներմուծման իրական ծավալների նվազում, իսկ երկրորդ կիսամյակի ընթացքում՝ աճ, որի պարագայում 2011 թ. ապրանքների և ծառայությունների իրական ծավալների փոքր աճ կարձանագրվի: Ներմուծման մասով ռիսկերը նույնպես երկու ուղղությամբ են, ինչը պայմանավորված է ներքին տնտեսության և միջազգային գների զարգացումներով:

Ֆիզիկական անձանց ոչ առևտրային փոխանցումների վերաբերյալ կանխատեսումները չեն փոխվել, և ակնկալվում է, որ 2011 թ. վերջիններիս աճը կգտնվի 9 - 13% միջակայքում, ինչը հիմնականում կպայմանավորվի Ռուսաստանի տնտեսության զարգացումներով: ԱՄՀ վերջին կանխատեսումների համաձայն՝ Ռուսաստանի տնտեսական աճի

ցուցանիշը 2011 թ. կկազմի 4.5%՝ փոքր-ինչ գերազանցելով վերջին կանխատեսված ցուցանիշը:

Նշված զարգացումների արդյունքում ակնկալվում է, որ ընթացիկ հաշիվ / ՀՆԱ ցուցանիշը 2011 թ. կբարելավվի և կգտնվի 11.5 - 13.5% միջակայքում:

Համախմբված բյուջե²²

2011 թվականին ՀՀ Կառավարությունը շարունակելու է անցումը հակաճանաժամային քաղաքականությունից հավասարակշռված քաղաքականության՝ մի կողմից չնպաստելով լրացուցիչ գնաճային ճնշումների առաջացմանը, մյուս կողմից՝ չխոչընդոտելով տնտեսական աճի վերականգնմանը: Պետական ծախսային ծրագրերի ապահովման հիմնական ուղենիշը ՀՆԱ-ում հարկային եկամուտների՝ նախորդ տարվա նկատմամբ 0.3 տոկոսային կետ աճի ապահովումն է և պետական ծախսերի իրականացումը՝ ծրագրված համամասնություններին համապատասխան: Պետական ծախսերի նախատեսված աճը հիմնականում ընթացիկ ծախսերի գծով է, իսկ կապիտալ ծախսերի գծով կարճաժամկետի նվազում: Հատկանշական է, որ 2010 թվականի համեմատ պակասորդ / ՀՆԱ ցուցանիշը կնվազի շուրջ 1 տոկոսային կետով:

Այսպիսով, վերոնշյալի արդյունքում համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականությունը 2010 թվականի համեմատ կունենա գրեթե չեզոք ազդեցություն, որը հիմնականում ծախսերի փոքր ընդլայնող և եկամուտների փոքր զսպող ազդեցությունների դրսևորման հետևանք է: Այնուամենայնիվ, տարվա առաջին կեսին հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա որոշակի ընդլայնող ազդեցություն կդրսևորի՝ հիմնականում պայմանավորված 2010 թվականի տարեվերջի ընդլայնող ազդակի լազային ազդեցության փոխանցմամբ, որը, սակայն, կչեզոքանա տարվա երկրորդ կեսին:

Ամփոփելով նշենք, որ 2011 թվականի առաջին կիսամյակը իր վրա կկրի 2010 թվականի չորրորդ եռամսյակի բյուջեի ընդլայնող քաղաքականության լազային դրսևորման ազդեցությունը, ինչը զուգակցվելով աշխատանքի շուկայի թույլ գնաճային ճնշումների և մասնավոր ծախսումների չեզոք ազդեցությամբ, որոշակի գնաճային ճնշումներ կառաջացնի, որը կիսամյակի համար գնահատվում է 1.4 - 1.7 տոկոսային կետ:

Ինչ վերաբերում է 2011 թվականի երկրորդ կիսամյակին, ապա, հաշվի առնելով հարկաբյուջետային հատվածի չեզոք ազդեցության դրսևորումը, ինչպես նաև աշխատանքի շուկայի թույլ գնաճային ճնշումները և մասնավոր ծախսումների չեզոք ազդեցությունը, գնահատվում է, որ նշված հատվածների կողմից գնաճի վրա զուտ ազդեցությունը կլինի 0.3 - 0.4 տոկոսային կետ:


²² Հարկաբյուջետային հատվածի ազդեցության գնահատումը կատարվել է «ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համամասնությունների հիման վրա կազմված համախմբված բյուջեի ցուցանիշներով: Հարկաբյուջետային ազդակը գնահատվել է 2010 թվականի (բազիսային տարի) համախմբված բյուջեի ցուցանիշների նկատմամբ՝ պայմանավորված տնտեսության վերականգնման դրական միտումներով և հակաճանաժամային ընդլայնող հարկաբյուջետային քաղաքականությունից հավասարակշռված քաղաքականության վերադառնալով: Հարկ է նշել, որ եկամուտների ազդեցությունը հաշվարկվել է գնահատված ՀՆԱ անվանական ցուցանիշի, իսկ ծախսերի ազդակը՝ գնահատված պրոյեկցիոն ՀՆԱ նկատմամբ:

ԳՆԱԾԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ 12-ԱՄՍՅԱ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Հիմք ընդունելով մակրոտնտեսական փաստացի և կանխատեսվող զարգացումները՝ առանձին ապրանքախմբերով գնաճի մոդելի և եռամսյակային կանխատեսումների մոդելի միջոցով իրականացվել են գնաճի կանխատեսումներ և նախանշվել դրամավարկային քաղաքականության ուղղությունները կանխատեսվող 12-ամսյա հորիզոնում:

Առանձին ապրանքախմբերով գնաճի մոդելի կանխատեսումների հիմքում դրվել է շուկայական տոկոսադրույքների՝ ներկայումս ձևավորված մակարդակի պահպանման վարկածը, ինչը նշանակում է, որ գնահատվել են գնաճի հնարավոր զարգացումները ներկայիս պահպանողական դրամավարկային քաղաքականության շարունակման պայմաններում: Այս վարկածի հիման վրա ստացված կանխատեսումների համաձայն՝ դեռևս տարեվերջից փոխանցվող առաջարկի շուկերով, այդ թվում՝ գյուղատնտեսական ապրանքների գների աննախադեպ բարձր աճով և հիմնական պարենային և հումքային ապրանքների միջազգային գների բարձրացմամբ պայմանավորված՝ 2011 թվականի առաջին կիսամյակում 12-ամսյա գնաճը կպահպանվի բարձր մակարդակում. 12-ամսյա գնաճի կենտրոնական արժեքը առաջին կիսամյակի ավարտին կանխատեսվում է 9.5%: Երրորդ եռամսյակից սկսած, նշված ցնցումների մարման պայմաններում, գնաճի տեմպերը կնվազեն, և տարեվերջին կանխատեսվող գնաճի կենտրոնական արժեքը կկազմի 5.3%²³, ինչը, սակայն, դեռևս բարձր կլինի 12-ամսյա գնաճի 4±1.5% նպատակային թիրախի կենտրոնական արժեքից: Բացի այդ, առկա անորոշությունների պայմաններում բարձր է նաև կանխատեսվող կենտրոնական արժեքից գնաճի շեղման հավանականությունը: Շուրջ 41% հավանականությամբ՝ 12-ամսյա գնաճը տարեվերջին կարող է լինել 5.5 - 7.5%-ի շրջանակներում:

Գնաճի կանխատեսման հավանականությունների բաշխման գրաֆիկ (12-ամսյա)



²³ Առանձին ապրանքախմբերով գնաճի կանխատեսման մոդելի արդյունքների սրացման ընթացքում կիրառվել են սպառողական զանբյուրում ապրանքների և ծառայությունների գործող կշիռները, որոնք ամենայն հավանականությամբ կփոփոխվեն 2011 թվականի մարտից:

2010 թվականի գնաճի կանխատեսման հավանականությունների բաշխում

Գնաճի միջակայքը	Գնաճի՝ տվյալ միջակայքում լինելու հավանականություն	
	2011թ. II եռ.	2011թ. IV եռ.
< 3.0%	0.00%	1.4%
3.0 - 4.0%	0.00%	7.1%
4.0 - 5.5%	0.00%	31.0%
5.5 - 7.5%	0.04%	40.9%
7.5 - 9.5%	41.4%	16.5%
9.5% <	53.9%	2.6%

Գնաճի կանխատեսված արժեքների հավանականությունների բաշխման գրաֆիկը

Գրաֆիկը ներկայացնում է ոչ միայն կանխատեսումների արդյունքում ստացված կերպային արժեքները, այլ նաև ապագայում այդ արժեքներից հնարավոր շեղման միջակայքերը՝ ըստ ԿԲ գնահատումների: Կենտրոնական արժեքը համապատասխանում է «Ըստ ապրանքատեսակների գնաճի կանխատեսման մոդելով» ստացված կանխատեսումներին: Վերջիններս գնահատվում են շուկայում ձևավորված տրոստադրույքների անփոփոխության վարկածի և այլ մակրոտնտեսական զարգացումների ներքո: Այնուհետև քննարկվում են ռիսկեր, որոնք կարող են շեղել կանխատեսված գնաճը կենտրոնական արժեքից, այլ կերպ ասած՝ գնահատվում է ռիսկերի հաշվեկշիռը, որն էլ պայմանավորում է կենտրոնական արժեքից միջակայքերի հեռավորությունը: Կից աղյուսակը ներկայացնում է, թե գնաճն այս կամ այն միջակայքում ինչ հավանականությամբ կգտնվի: Կանխատեսված արժեքների հավանականությունների բաշխման գրաֆիկի վերաբերյալ վերլուծական նյութը տեղադրված է ՀՀ ԿԲ կայքէջում՝ www.cba.am/CBA_SITE/downloads/verluc/1.1.pdf:

Կանխատեսվող հորիզոնում գերակշռող են գնաճի՝ կանխատեսված արժեքից աճի ուղղությամբ շեղման ռիսկերը: Վերջիններս կապված են հետևյալ զարգացումների հետ: Նախ, համաշխարհային տնտեսության ավելի արագ տեմպերով վերականգնման պայմաններում հնարավոր է հումքային և պարենային ապրանքների՝ կանխատեսվածից

բարձր միջազգային գների ձևավորում: Երկրորդ, ներքին պահանջարկի ավելի արագ տեմպերով վերականգնումը և ակցիզահարկի ու ծխախոտի հաստատագրված վճարները հարկման ընդհանուր համակարգով փոխարինելու օրենսդրական փոփոխությունը կարող են առաջացնել ներքին գնաճային ճնշումներ: Միևնույն ժամանակ, գյուղատնտեսության ոլորտի զարգացումներից կախված, կարող են դրսևորվել ռիսկեր ինչպես գնաճի նվազման, այնպես էլ աճի ուղղությամբ, սակայն նվազման ուղղությամբ ռիսկերը այս դեպքում գերակշռող են:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կանխատեսվող ժամանակահատվածում գնաճը իր նպատակային միջակայքի կենտրոնական արժեքին՝ 4%-ին մոտեցնելու համար դրամավարկային պայմանները պետք է խստացվեն՝ զուգահեռաբար շարունակելով ապադոլարայնացման միջոցառումների իրականացումը:

ՀՀ ԿԲ-ում կիրառվող եռամսյակային կանխատեսումների մոդելի միջոցով գնաճի կանխատեսումները և նախանշվող դրամավարկային քաղաքականության ուղղությունները ընդհանուր առմամբ համահունչ են առանձին ապրանքախմբերով գնաճի մոդելի արդյունքներին: Եռամսյակային կանխատեսումների մոդելի արդյունքները ստացվել են 2010 թ. չորրորդ եռամսյակում ձևավորված փաստացի մակրոտնտեսական պայմանների հիման վրա: Մասնավորապես, գնահատվել է, որ պահպանվող բարձր գնաճային միջավայրը առավելապես շարունակել է պայմանավորվել առաջարկի շուկերի ազդեցությամբ, ընդ որում՝ չորրորդ եռամսյակում արտաքին միջավայրից փոխանցվող գնաճային ճնշումները մեծացել են, ինչը, որպես գնաճի ավելացման ռիսկ, նախանշվել էր նախորդ կանխատեսումների ժամանակ:

Վերոնշյալ մակրոտնտեսական նախնական պայմանների ներքո իրականացված կանխատեսումների համաձայն՝ սպասվում են գնաճի հետագա վարքագիծը պայմանավորող հետևյալ մակրոտնտեսական զարգացումները: Ակնկալվում է, որ համախառն պահանջարկը կանխատեսվող հորիզոնում կշարունակի վերականգնվել, սակայն տնտեսական աճի դեռևս դանդաղ տեմպերի պայմաններում ՀՆԱ-ն կպահպանվի իր հավասարակշիռ մակարդակից ավելի ցածր մակարդակում: Այս պարագայում համախառն պահանջարկով պայմանավորված լրացուցիչ գնաճային ճնշումներ չեն սպասվում: Մյուս կողմից, արտաքին միջավայրում պահպանվող բարձր գնաճային միջավայրի ազդեցությունը շարունակելու է արտահայտվել ներքին ապրանքային շուկաներում՝ ներմուծվող ապրանքների գների միջոցով ազդելով ընդհանուր գնաճի վրա: Ընդհանուր առմամբ, եռամսյակային կանխատեսումների մոդելի միջոցով ստացված արդյունքները ևս վկայում են, որ տարվա առաջին կիսամյակում առաջարկի շուկերի ազդեցությունը գնաճի վարքագծի վրա կգերակայի՝ պահպանելով այն բարձր մակարդակում, և միայն տարվա երկրորդ կեսից 12-ամսյա գնաճի տեմպերը կնվազեն, սակայն տարեվերջին կպահպանվեն նպատակային թիրախի կենտրոնական արժեքից ավելի բարձր մակարդակում:

Եզրահանգումը նույնն է. այս պայմաններում գնաճը իր նպատակային միջակայքի կենտրոնական արժեքին՝ 4%-ին մոտեցնելու համար դրամավարկային պայմանները պետք է խստացվեն՝ զուգահեռաբար շարունակելով ապադոլարայնացման միջոցառումների իրականացումը: Միաժամանակ, չի բացառվում, որ առկա անորոշությունները կարող են որոշակի շեղումներ մտցնել գնաճի սպասվող զարգացումներում, հետևաբար դրամավարկային քաղաքականության նախանշվող ուղղություններում:

Այս համատեքստում 2011 թ. **դրամավարկային ցուցանիշների** կանխատեսումների հիմքում ընկած են նախորդ տարվա արդյունքներով ձևավորված փաստացի մակրոտնտեսական միջավայրը, հաջորդ մեկ տարվա կտրվածքով կանխատեսված մակրոտնտեսական զարգացումները և այդ ժամանակահատվածի համար նախատեսված հարկաբյուջետային քաղաքականության սցենարը: Միաժամանակ, դրամավարկային պայմանների խստացման հետ մեկտեղ հաշվի են առնվել շարունակվող ապադոլա-

րայնացման միջոցառումները, որի պարագայում 2011 թվականի համար կանխատեսվել է փողի զանգվածի նկատմամբ դրամային զանգվածի առաջանցիկ աճ: Փողի և դրամային զանգվածների աճը կանխատեսվել է համապատասխանաբար 16.0% և 22.2%, իսկ փողի բազայի աճը կկազմի 12.3%: Տնտեսության դոլարայնացման ակնկալվող նվազումը կարտահայտվի արտարժույթայինի նկատմամբ դրամային ավանդների առաջանցիկ աճով՝ համապատասխանաբար 35.2% և 7.6% (նախորդ տարի՝ համապատասխանաբար 29.0% և 7.0% աճ), ինչպես նաև շրջանառությունում գտնվող կանխիկ դրամի 13.0% աճով, որը շուրջ երկու անգամ գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը:

2011 թվականին ֆինանսական համակարգը կպահպանի ակտիվությունը տնտեսության վարկավորման ոլորտում: Ակնկալվում են բիզնեսի վարկավորման բարձր աճի տեմպեր և հիփոթեքային վարկավորման աշխուժացում, սակայն 2011 թվականին տնտեսության վարկավորման աճի տեմպերն ավելի «զուսպ» կլինեն (18%՝ նախորդ տարի արձանագրված 27%-ի փոխարեն), ինչը հիմնականում պայմանավորված կլինի դրամավարկային պայմանների նախատեսվող խստացմամբ:

Հավելված

ԱՊՀ երկրների գնաճը 2010 թվականին*

Երկիր	ՍԳԻ	Պարենային ապրանքներ
Հայաստան	109.4	114
Բելառուս	109.9	114.1
Ուկրաինա	109.1	110.6
Մոլդովա	108.1	107.1
Ղազախստան	107.8	110.1
Ռուսաստան	108.8	112.9
Ղրղզստան	119.2	NA
Տաջիկստան	110.0	114.2
Ադրբեջան	107.8	NA
ԱՊՀ երկրներ, միջինը	110.0	
Վրաստան	111.2	122.8

* Աղբյուրը՝ երկրների ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքեր: